լսել նրա բերանից մի խօսք: Նա ոչ ոքի հետ չէր խօսում, բացի Մարօից եւ բացի իր ամուսնից, այն եւս այն ժամանակ, երբ երկուքը միասին էին, եւ երրորդ անձն չկար նրանց մօտ:

Տանեցիներից ուրիշ մարդ չէր երեւում:

Միայն Հասօի երեխաները, քարշ ընկած մօր փէշերից, ճչվչում էին, պահանջում էին մի բան ուտելու: Մայրը խփում էր նրանց գլխին, պատուիրում էր, որ սուս կենան եւ համբերեն:

Ես նկատեցի, Մարօի խօսքը բոլորովին ուղիղ էր, որ նա ասաց ինձ իր հօրը ճանապարհ դնելեն յետոյ՝ «մենք էլի մնացինք մենակ»...

Եւ իրաւ, ծերունի որսորդը գնաց եզիդիների ցեղապետի մօտ: Մըհեն սատանայի պէս անյայտացաւ: Յասոն իր ագարկից տուն չէր դառնում. նա պարապած էր իր դաշտային գործերով: Պառաւ Խաթունը թոնիրը վառելեն եւ կերակուրները եփելեն յետոյ, նստում էր չարդախի տակ, այն հով տեղում բուրդ էր մանում: Հասօի կինը հանգստութիւն չունէր իր երեխաների ձեռքից: Էլ ո՞վ էր մնում, — ես ու Մարօն, որ բաւականին ազատ ժամեր ունէինք, խօսի՛ր, ծիծաղի՛ր, որքան քէֆդ է: Մարօն շուտ դարձաւ նախիրից: Նա մօտեցաւ, իմ սենեակի պատուհանից նայեց, որ իմանայ ես զարթնե՞լ եմ, թէ ոչ: Երբ տեսաւ ինձ հագնուած, ներս մտաւ: Նրա դէմքը բաւականին տխուր էր:

— Գիտե՞ս, Ֆարհատ, — ասաց նա, — երբ կովերը հասցրի նախիրին, ետ դառնալու ժամանակ անցայ գիւղի միջով: Ամէն տներից գալիս էր գաթայի ու նազուքի հոտը, ամէն տեղ հալոայ էին շինում: Բոլորը պատրաստւում են ուխտ գնալու:

— Որտե՞ղ:

— Չե՞ս իմանում: Այսօր հինգշաբթի է, էգուց ուրբաթ, միւս օրը...

— Շաբաթ:

— Հա՛: Շաբաթ օրը սուրբ աստուածածնի ուխտի օրն է: Ողջ Հաղբակը այնտեղ կը լինի:

— Սալմաստն էլ այնտեղ կը լինի, — պատասխանեցի ես:

Իրաւ որ, նրա տօնին այնտեղ հաւաքւում էր մեծ բազմութիւն սալմաստեցի եւ հաղբակեցի ուխտաւորների: Չգիտեմ ինչո՞ւ աստուածածնի անունը յիշեցրեց իմ մանկութիւնը: Այնտեղ ամէն տարի տանում էր ինձ մայրս, քոյրերիս հետ, տօնական հանդէսների ժամանակ:

— Բա՛, ամէնը գնան, ես մնա՞մ, — հարցրուց Մարօն:

— Դու էլ գնա: